

Նունե Զոմարդյան

*ԵՄՀ միջազգային կապերի և հեղուկությունների կենտրոնի
պատրաստման, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ,
նույն ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am*

DOI: 10.53614/18294952-2021.1-21

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Հիմնվելով Ա.Սենի և Զ.Ռոուզի տեսությունների վրա սույն հոդվածում սոցիալական արդարության սկզբունքի իրագործումը դիտարկվել է երկու տեսանկյուններից՝ որպես «սկզբնական բարիքների հավասար բաշխում» և որպես «ընդունակությունների զարգացման հավասար հնարավորություններ»: Մեթոդական այդ մոտեցմամբ էլ գնահատվել է սոցիալական արդարության և իրավաստեղծագործության առնչվածությունը, որի ընթացքում սոցիալական արդարությունը շեշտադրվել է որպես իրավաստեղծ գործընթացի հիմնական նպատակներից մեկը: Կարևորվել է նաև ժամանակակից իրավական տեխնոլոգիաների կիրառումը: Հարկային օրենսգրքում իրականացված վերջին փոփոխությունների վերլուծության հիման վրա մատնանշվել են առկա թերությունները և նշվել դրանց հաղթահարման ուղիները:

Հիմնաբառեր. սոցիալական արդարություն, իրավաստեղծ գործընթաց, սկզբունք, նպատակ, իրավական տեխնոլոգիա:

Ներածություն

Սոցիալական պետության արդի իրավաբանական մեթոդական հենքը սահմանադրական լուծումների մարդակենտրոն համակարգն է, որի շրջանակներում սոցիալական խնդիրների լուծման կենտրոնում միայն մարդն է՝ իր իրավունքներին ու ազատություններին համապատասխան արժանապա-

տիվ կյանք վարելու և ազատ զարգանալու ձգտումներով: Այս տեսակետից առաջնային նշանակություն է ձեռք բերում ոչ միայն սոցիալական պետության՝ որպես սահմանադրական կարգի սկզբունք ամրագրումը, այլ նաև վերջինիս հետևողական իրացումը երկրի հասարակական քաղաքական կյանքում:

Մի շարք հեղինակներ վերը նշած սկզբունքի իրագործումը կապում են սոցիալական պետության կողմից իրականացվող հատուկ սոցիալական գործառնությունների հետ և այդ տեսանկյունից առանձնացնում են սոցիալական ու ոչ սոցիալական պետություններ: Տ.Ն. Ռադկոյի մոտեցմամբ սոցիալական և ոչ սոցիալական պետությունների տարբերությունը կախված է սոցիալական գործառնության շրջանակից և բովանդակությունից: Իրավագետի կարծիքով այն պետությունները, որոնք դեռ չեն կարող համարվել սոցիալական, իրենց սոցիալական գործառնության մեջ ներառում են առողջապահության, մշակույթի, կրթության, կենսաթոշակների, սոցիալական ապահովագրության և այլ բնագավառներում սոցիալական գործունեության բոլոր ոլորտները: Սոցիալական պետություններում առանձնանում են մի քանի ներքին գործառնություններ, որոնք և բնութագրում են վերջինիս որպես սոցիալական: Դրանցից են՝ տնտեսական գործառնությունը (ունի հստակ սոցիալական ուղղվածություն), բնակչության արժանապատիվ կյանքի պահպանման գործառնությունը, կրթության զարգացման և քաղաքացիների մշակութային իրավունքների պահպանման գործառնությունը, առողջապահության կազմակերպման գործառնությունը, սոցիալական ծառայությունների մատուցման գործառնությունը և այլն (Радько, 2009, էջ 221):

Ա.Խ. Մալիկովան գտնում է, որ սոցիալական գործառնությունը սոցիալական պետության առանցքային գործառնություն է, որոնք իրականացվում են պետության հիմնական նպատակներից մեկին՝ սննդի, հագուստի, հոգևոր զարգացման և այլ ոլորտներում յուրաքանչյուրի նվազագույն կարիքների բավարարմանը հասնելու համար: Ինչ վերաբերում է ոչ սոցիալական պետության սոցիալական գործառնությունների իրականացմանը, ապա դրանք ունեն երկրորդական նշանակություն, քանի որ նման պետության գլխավոր գործառնություն է՝ հասնել կոնկրետ նպատակի, որը, որպես կանոն, ուղղված է գոյություն ունեցող ռեժիմի պահպանմանը (Маликова, 2012, էջ 193):

Մեր կարծիքով սոցիալական պետության սկզբունքի իրացումը կապել որոշակի խումբ գործառնությունների իրագործման հետ, նշանակում է նեղացնել տվյալ հասկացության իրավաբանական սահմանները: Համամիտ ենք այն իրավական դիրքորոշման հետ, ըստ որի սոցիալական պետության սկզբունքը ընդհանուր ծրագրային դրույթ և սահմանադրաիրավական ուղենիշ լինելուց բացի նաև պարտադիր սահմանադրական նորմ է հանդիսանում (Դանիելյան, Այվազյան, Մանասյան, 2015, էջեր 137–138): Դա նշանակում է, որ սոցիալական պետության հայեցակարգը, հանդիսանալով սահմանադրական կարգի սկզբունք, ընդգրկում է հասարակական հարաբերությունների ողջ լրակազմը (Шушицкая, 2020, Т. 4, № 1. էջ 58) և որպես այդպիսին պետք է իրագործվի իրավունքի բոլոր ոլորտներում (Нечаева,

2007, էջ 49, նաև Դանիելյան, Այվազյան, Մանասյան, 2015, էջ 138), ուղղված լինի սոցիալական արդարությանն ու ապահովի արդար սոցիալական կարգ (Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014, էջ 23–24): Այսինքն՝ սոցիալական արդարության սկզբունքը պետք է դրվի երկրում գործող ինստիտուտների և նորմերի հիմքում, դառնա հանրային քաղաքականության մշակման և իրականացման հիմնաքարը, նպաստի իրականացվող իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապաշտպան գործունեության սոցիալականացմանը:

Սույն հոդվածում առանձին իրավական նորմերի ուսումնասիրության հիման վրա կներկայացնենք սոցիալական արդարության կարևորությունը իրավաստեղծ գործընթացում:

Մեթոդ

Սոցիալական արդարության բովանդակության բացահայտումն իրականացվել է հիմնվելով Ամատիա Մենի և Ջոն Ռոուլզի կողմից առաջադրված հայեցակարգային մոտեցումների համադրման վրա, համաձայն որի վերջինս դիտարկվում է որպես «սկզբնական բարիքների հավասար բաշխում» և «ընդունակությունների զարգացման հավասար հնարավորություններ»: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև նորմատիվ նյութի դասակարգման, համեմատական-իրավական, համակարգային վերլուծությունների, իրավական փորձարարության մեթոդների հիման վրա:

Սոցիալական արդարության իրացման առանձնահատկությունները

Մարդակենտրոն սահմանադրության տեսանկյունից սոցիալական արդարության սկզբունքի իրացումը պետք է հաշվի առնի վերջինիս երկու տեսանկյունները՝

- բոլորի և յուրաքանչյուրի համար ընդունակություններ ձեռք բերելուն զուգահեռ հավասար հնարավորությունների տրամադրումն (Sen, 1993) առանց որևէ խտրականության,
- եկամուտների և ունեցվածքի արդարացի բաշխումը բյուջեի և այլ միջոցների վերաբաշխմամբ:

Առաջին դրույթը, նշանակում է, որ արդարության ձգտող ցանկացած պետություն պետք է պատասխանատվություն կրի յուրաքանչյուրի համար ունակությունների ձեռք բերման անհատական հնարավորություններ ապահովելու հարցում: Մարդիկ պետք է ունենան հնարավորություն իմաստավորելու իրենց կյանքը և, ելնելով սեփական շահերից, կարողանան օգտվել իրենց տրված հիմնարար իրավունքներից: Երկրորդի դեպքում բոլոր մարմինները, ինստիտուտներն ու կազմակերպությունները պետք է ներառվեն հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգի մեջ, որպեսզի բաշխեն այն առաջնային բարիքները, որոնք էական են կյանքի հավասար հնարավորություններ ստեղծելու համար: Իսկ հիմնական բա-

րիքներից ամենակարևորներն են «իրավունքները, ազատությունները և հնարավորությունները, եկամուտն ու հարստությունը, ինքնահարգման սոցիալական պայմանները» (Rawls, 1971, էջ 92):

Ինչպես տեսնում ենք «նեգատիվ ազատության» դասական ազատական սկզբունքը, այսինքն՝ ազատությունը պետության կամ երրորդ կողմի միջամտությունից, ինչպես նաև «պոզիտիվ ազատությունը» կամ որևէ գործողություն կատարելու ազատությունը հանգեցնում են շուկայի սահմաններից դուրս շատ ավելի հեռու գնացող վերաբաշխման միջոցների (Giebler, Heiko, Merkel, Wolfgang, 2014, էջ 85): Իհարկե, այս համատեքստում կասկածից վեր է շուկայի արդյունավետությունը, քանի որ այն անհրաժեշտ է ազատ և արդարացի հասարակության համար, սակայն դա ևս հաստատում է մեր պնդումն առ այն, որ ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածում ամրագրված սոցիալական արդարության սկզբունքի իրացումը չի սահմանափակվում տնտեսական արդարության իրավաբանական և իրավակարգավորմամբ, այլ ներգործում է հասարակական հարաբերությունների ողջ համալիրի կարգավորման վրա:

Վերը նշված դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետությանը նախևառաջ անհրաժեշտ են սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ: Հակառակ դեպքում իրավական նշանակության հարցեր լուծելու ընթացքում սոցիալական արդարության սկզբունքի անտեսումը կամ բացառումը ոչ միայն կխզի կապը պետության և անհատի միջև, այլ նաև հասարակության մեջ կառաջացնի շերտավորում և անարդարություն (Մալխասյան, 2017, № 2, էջ 210): Դա է այն կարևոր հիմնավորումներից մեկը, համաձայն որի սոցիալական արդարությունը դիտարկվում է որպես իրավաստեղծ գործընթացի որակական չափանիշների բաղադրամաս (Մաֆարյան, 2004, էջ 6):

Սոցիալական արդարության և իրավաստեղծ գործընթացի առնչակցությունները

Ժամանակակից հասարակության մեջ արդիական է իրավաստեղծ գործընթացում սոցիալական արդարության՝ որպես իրավաստեղծ գործընթացի հիմնական նպատակներից մեկի, շեշտադրումը: Խելամիտ նպատակադրումը, ինչպես նաև միջոցների օպտիմալ ընտրությունը դիտարկվում են որպես արդարության և որակի ապահովման կարևորագույն մեթոդ: Օրինակ՝ բնակչության եկամտային ու գույքային բևեռացումը զսպելու նպատակով պետությունը հարկային ոլորտում պետք է ելնի հարկերի ոչ միայն ֆիսկալ, այլ նաև սոցիալ-վերաբաշխողական, եկամտահարկի պրոգրեսիվ հարկման և այլ նպատակադրույթներից: Իհարկե, այս կամ այն հարկի կիրառումը պայմանավորված է տվյալ երկրում իրականացվող տնտեսական և հարկային քաղաքականության հետապնդած նպատակներով: Բայցևայնպես, հարկային համակարգերը վերաբաշխման տեսանկյունից սոցիալական արդարության հասնելու ամենահիմնական միջոցն են, իսկ եկամուտների պրոգրեսիվ հար-

կային համակարգերը՝ արդարացի: Դրանք նպատակ ունեն նվազեցնել եկամտի անհավասարությունն ու ապահովել հարկման արդարության սկզբունքի իրացումը¹:

Մեթոդոլոգիական նման մոտեցումը որոշակի հարցեր է առաջացնում ՀՀ հարկային օրենսգրքում վերջին շրջանում իրականացված եկամտահարկի և անշարժ գույքի հարկի փոփոխությունների առնչությամբ: Այսպես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 2019թ.հունիսի 25-ի փոփոխությունների և լրացումների արդյունքում գործող եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափից անցում կատարվեց համահարթ դրույքաչափի: Օրինագծի հեղինակները դրա հիմնավորման հիմնական նպատակներ սահմանեցին ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործումն ու կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծումը (Հիմնավորում, Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0): Այս փոփոխությունները փաստորեն հետապնդում էին բացառապես ֆիսկալ նպատակ և չէին անդրադառնում խնդրի սոցիալական բաղադրիչին: Հարցն այն է, որ բարձր եկամուտներ ունեցողների դեպքում տեղի է ունենում հարկային բեռի կտրուկ կրճատում, իսկ բնակչության համեմատաբար ցածր եկամուտներ ունեցողների, հատկապես՝ սոցիալապես խոցելի խմբերի համար հարկային բեռի էական փոփոխություն տեղի չի ունենում: Ցածր աշխատավարձ ստացողների կողմից տնօրինվող եկամտի անփոփոխության պայմաններում նկատվում է բարձր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամուտների ավելացում՝ հանգեցնելով սոցիալական բևեռացման հետագա խորացմանն ու սրացմանը (ՀՀ ԱԺ Աշխատակազմի տնտեսագիտական փորձաքննության վարչության տնտեսական փորձաքննության բաժնի կողմից 17.04.2019թ. տրված եզրակացություն): Եկամտահարկի պրոգրեսիվ հարկման առավելությունների մասին է վկայում նաև մի շարք երկրների վերջին տարիների փորձը: Մակեդոնիան, որը 2007 թվականին հարկման համակարգի բարեփոխումների արդյունքում անցում կատարեց եկամտահարկի համահարթ հարկմանը, վերջին տասը տարում տնտեսական էական առաջընթաց չգրանցեց: Ավելին, այս հանգամանքն ուղղակիորեն նպաստեց անհավասարության սրնթաց աճի և երկիրն անհավասարության առումով լրացրեց Եվրոպայի առավել անհավասար պետությունների շարքը: Սլովակիան 2004 թվականին պրոգրեսիվ համակարգից անցում կատարեց 19 տոկոս համահարթ եկամտահարկի և 2013 թվականին կրկին վերադարձավ պրոգրեսիվ համակարգի: 2004 թվականին Գերմանիայում մշակվեց եկամտահարկի ներմուծման և տն-

1 Օրինակ, Մեքսիկայում մեծ ուշադրություն է դարձվում հարկային համակարգի բարեփոխմանը, որպեսզի վերացվի կյանքի մակարդակի և տնային տնտեսությունների եկամուտների տարածական տարբերությունները գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև: Այլ երկրներում, ներառյալ Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները, առաջադեմ հարկեր են գանձվում եկամտի և որոշակի ապրանքներից, ինչի հետևանքով՝ հարկերի դրույքաչափը բարձրանում է անձի վճարունակությանը համամասնորեն (Khechen, 16 December 2013, էջ 6)

տեսական աճի խթանման հայեցակարգ: Սակայն հանգամանքների բերումով Գերմանիան ևս հրաժարվեց համահարթ եկամտահարկի գաղափարից (Քաղաքական դիսկուրս, 08.03.2019) :

Մեր կարծիքով սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում սոցիալական արդարության սահմանադրական սկզբունքի իրականացման հիմնական ուղին եկամտահարկի պրոգրեսիվ գանձումն է, որը հնարավորություն կտա նյութական ռեսուրսների վերաբաշխման միջոցով բարելավել մատուցվող հանրային ծառայությունների որակը, ինչպիսիք են օրինակ՝ հասարակական տրանսպորտը, կրթությունը, առողջապահությունը և այլն:

Անշարժ գույքի հարկմանը վերաբերող 2020թ. հունիսի 25-ին կատարած փոփոխությունների դեպքում օրենսդիրն իր նպատակը համարեց կադաստրային արժեքների հիման վրա անշարժ գույքի հարկի հաշվարկման համակարգից անցում կատարել անշարժ գույքի շուկայական արժեքների մոտարկված արժեքների հիման վրա հաշվարկվող անշարժ գույքի հարկի համակարգին: Նպատակի իրականացման արդյունքում տեսանելի հարստության կամ ունեցվածքի համար սահմանվելու էր ավելի արդարացի հարկային բեռ՝ ապահովելով պետության վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0): Առաջին հայացքից թվում է, որ փոփոխությունները հետապնդում են բացառապես սոցիալական արդարության հաստատման նպատակ: Սակայն առաջարկվող նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հարկման նման համակարգի պայմաններում տեղի է ունենում անշարժ գույքի հարկի գծով հարկային բեռի ավելացում և չհարկվող շեմի վերացում ողջ բնակչության շրջանում: Ավելին, անշարժ գույքի գնահատման ժամանակ կիրառվում է տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը, որի հիման վրա կտրուկ աճում են առանձին գոտիներում, հատկապես՝ Երևան քաղաքի կենտրոնում գտնվող բնակելի տների հարկերը: Ընդ որում, նման ծանր հարկային բեռ է սահմանվում հավասարապես բոլոր սոցիալական խմբերի համար:

Այն, որ փոփոխության արդյունքում տեղի է ունենում անշարժ գույքի հարկի գծով հարկային բեռի կտրուկ աճ, ընդունվում է նաև օրինագծի հեղինակների կողմից, ինչը կանխելու համար վերջիններս առաջարկում են հարկման նոր համակարգին անցում կատարել չորս տարիների ընթացքում (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0): Հարց է առաջանում, արդյո՞ք չորս տարի հետո այնքան բարելավված կլինի բնակչության ընդհանուր սոցիալական վիճակը, որպեսզի բոլոր սոցիալական խմբերն ի վիճակի լինեն վճարել տարեկան նման բարձր հարկեր, հատկապես համաձարակի և պատերազմի հասցրած վնասների պայմաններում, թե՞ ցածր եկամուտներ ունեցող ընտանիքները ստիպված են լինելու վաճառել իրենց, հատկապես բարձր հարկման գոտիներում գտնվող բնակարանները՝ ավելի էժան արժեք ունեցող գույք գնելու համար:

Այն պնդումը, որ նոր համակարգը նպաստելու է տեղական բյուջեների կայունացմանը (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0), դժվար է արդարացնել այն տեսակետից, որ ցածր եկամուտ ունեցողի կողմից բարձր գույ-

քահարկ վճարելը լինելու է կամ անհնարին, կամ էլ ավելի է վատթարացնելու վիճակը, որի արդյունքում ունենալու է լրացուցիչ սոցիալական աջակցության կարիք: Մյուս կողմից, եթե օրենսդիրը նպատակ է հետապնդում տեսանելի հարստության կամ ունեցվածքի համար ավելի արդարացի հարկային բեռ սահմանել, ապա, մեր կարծիքով, սոցիալական արդարության ապահովման լավագույն լուծումը կլինի շքեղության հարկի ներդնումը:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ կատարված փոփոխություններին համապատասխան եկամուտների հարկումն իրականացվում է համահարթ մոդելի շրջանակներում, իսկ անշարժ գույքին՝ շուկայական արժեքի (պրոգրեսիվ հարկման) հիման վրա: Այս համակարգի պարագայում փոփոխությունների ողջ բացասական ազդեցությունն իր վրա զգում է հատկապես հասարակության առավել խոցելի խավը, իսկ փոփոխությունների նպատակը սոցիալական արդարությունից վերածվում սեփականության վերաբաշխման՝ ի օգուտ նյութապես առավել ապահովված խավերի:

Սոցիալական արդարության տեսակետից կարևոր է նաև օրինագծերի մշակման ընթացքում բացառել օտարերկրյա օրենքների ուղղակի ընդօրինակումը, իսկ տեղայնացման պայմաններում հաշվի առնել հայ ժողովրդի պատմական, մշակութային, հոգեբանական, սովորութային, տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ առանձնահատկությունները: Կարևոր է նաև օրինագծերի մշակման ընթացքում միջազգային փորձի ուսումնասիրության և համեմատության համար ձիշտ մեթոդաբանության ընտրությունը: Օրինակ՝ անշարժ գույքի հարկին վերաբերող օրենսդրական փոփոխությունների մշակման ընթացքում անշարժ գույքի հարկ/ՀՆԱ հարաբերակցությունը համեմատելու համար ուսումնասիրվել է մի շարք երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, Ճապոնիայի, Իսրայելի վիճակագրությունը: Ըստ այդ տվյալների եզրակացություն է արվել առ այն, որ Հայաստանում անշարժ գույքի հարկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ բավականին ցածր է (0.2%) և պետք է վերանայվի: Սակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք մենք համեմատել ենք մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը կամ նվազագույն աշխատավարձը նշված պետությունների հետ, թե՞ ուղղակի հիմնվել ենք վիճակագրական տվյալների վրա: Յու.Ա. Տիխոմիրովը ուսումնասիրելով գիտական-ձանաչողական փորձը և վերլուծական պրակտիկան, նշում է, որ վերլուծությունների ընթացքում օրենսդրական համանմանությունների (անոլոգիաների) արագ և անհաջող կիրառումը չի կարող հանգեցնել դրական արդյունքի: Ըստ իրավագետի՝ «իրավական փոխպատվաստումը» անխուսափելիորեն հանգեցնում է կոնկրետ իրավական համակարգի համար խորթ ակտերի ու նորմերի, և որպես արդյունք՝ դրանց հետագա մերժման: Կարևոր է նաև հաշվի առնել արտասահմանում և մեր երկրում այս կամ այն ինստիտուտների ծագման օբյեկտիվ պայմաններն ու գործոնները (Тихомиров, 1996, էջ 56): Նման սխալներից խուսափելու համար խորհուրդ է տրվում հաշվի առնել առկա և պլանավորված ակտի արտաքին նմանությունը որոշող տարբեր գործոններ:

Իրավաստեղծ գործընթացի արդյունավետության բարձրացման համար

հատկապես կարևորվում են ժամանակակից իրավական տեխնոլոգիաների՝ պլանավորման, իրավական կանխատեսման, իրավական փորձարարության, հանրային քննարկումների, կարգավորման ազդեցության գնահատման օգտագործումը իրավաստեղծ գործընթացում (Черногор, Залойло, 2018, էջ 84): Դրանք կարող են դիտարկվել որպես իրավական իրականությունը վերափոխելու, իրավունքը սոցիալական պրակտիկա ներմուծելու միջոց (Червонюк, 2009, № 3, էջեր 368–369):

Սոցիալ-տնտեսական զարգացման պլանների և ծրագրերի մշակման ժամանակ մի շարք երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Չինաստան և այլք) հատկապես շեշտադրվում է իրավական փորձարարության մեթոդը: Այն իրականացվում է համապատասխան լիազոր մարմնի կողմից՝ որոշակի ժամանակահատվածում, որոշակի տարածքի վրա հասարակական հարաբերությունների նոր իրավական կարգավորման կամ իրավական ինստիտուտի գործադրման հիմնավորվածությունն ու արդյունավետությունը ստուգելու նպատակով, իսկ ստացված տվյալների հիման վրա՝ որոշելու այդ փորձը երկրի ողջ իրավական տարածքի վրա անորոշ ժամանակով տարածելու հնարավորության հարցը (Черногор, Залойло, 2018, էջեր 97–98): Նման փորձնական (պիլոտային) ծրագրերը հնարավորություն են ընձեռում սահմանափակ տարածքներում տեսնել իրավական կարգավորման որոշակի թերությունները, բացթողումներն ու անձշտությունները: Որոշ դեպքերում էլ վերլուծության ու գնահատման հիման վրա հնարավոր է լինում ցույց տալ, որ երկիրը դեռ պատրաստ չէ այս կամ այն իրավակարգավորման հաջող ներդրմանը կամ հակառակը՝ եզրակացնել, որ լավագույն փորձի տարածումը կբարելավի առանձին ոլորտները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող փորձնական ծրագրերի մեծ մասն՝ իրավական ձևակերպում ստացած տնտեսական, ժողովրդագրական, մանկավարժական, սոցիալական և այլ փորձարարություններ են: Սակայն դրանց փորձարարական գործոնը ոչ թե իրավական կարգադրագրերն են, այլ վերը նշված այս կամ այն փորձարարությունների հետ կապված որոշումները: Իրավական փորձարարության մեթոդի ակտիվ կիրառումը Հանրապետությունում կարող է դրական ազդեցություն ունենալ հնարավորությունների հավասարության, գործազրկության դեմ պայքարի և սոցիալական արդարության ապահովման մի շարք խնդիրների լուծման համար: Դա կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ իրականացվում են երկրի համար կարևոր սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, ընդունվում են էական նշանակություն ունեցող քաղաքական որոշումներ, ինչպես նաև այն դեպքերում, երբ նախագծի արդյունավետությունն ի սկզբանե դրվում է կասկածի տակ: Փորձարարությունը ապահովում է նաև օրենսդրության կայունությունը:

Վերը նշված իմաստով հետաքրքրական է Ֆրանսիայի փորձը, որտեղ 2003թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունված 37.1 հոդվածում ուղղակիորեն նշվում է. «Օրենքը և կանոնակարգը, որպես կարգավորման առարկա, կարող են պարունակել փորձարարական բնույթի

դրույթներ, որոնք գործում են սահմանափակ ժամանակահատվածում»: Նմանատիպ դրույթ է պարունակում նաև 72-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ օրենսդրության մշակման համար իրավական փորձարարության անբավարար դիտարկումը կարող է հանգեցնել հապճեպ, չկշռադատված օրենսդրական որոշումների կայացման և տարատեսակ ռիսկերի ի հայտ գալուն: Այս առումով, անհրաժեշտ ենք համարում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում ամրագրել դրույթներ իրավական նորմերի մշակման ընթացքում իրավական փորձարարության կիրառման վերաբերյալ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ փորձարարության չափից ավելի կիրառումը կարող է հանգեցնել ձիշտ հակառակ արդյունքի՝ անվստահություն առաջացնել պետության՝ որպես ժողովրդի կամքի արտահայտողի նկատմամբ, զսպել իրավական կարգավորման զարգացումը (ավելի մանրամասն տես СивяцкиЙ, Сорокин, 2016. № 4, էջեր 15–30): Այդ իսկ պատճառով կարևոր է օրենսդրական ամրագրման հետ միաժամանակ մշակել սոցիալական և իրավական փորձարարության կազմակերպման ու անցկացման կարգը, ժամկետները, դեպքերն ու մեթոդները կանոնակարգող նորմատիվ ակտերը, որոնք կապահովեն դրանց գիտական կազմակերպումը, արդյունքների օբյեկտիվ գնահատումն ու ամփոփումը:

Սոցիալական արտադրության իրականացման համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը: Այն հանդիսանում է իրավաստեղծ մարմնի կողմից ընդունվող որոշումների արդյունավետությունը հիմնավորող գործիք, ունի առանցքային նշանակություն որոշումների կայացման գործընթացի բարելավման և դրա արդյունավետության բարձրացման գործում (Հայեցակարգ, ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1323-Լ որոշման Հավելված N 1, էջ 3): Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կարգավորման ազդեցության գնահատման բնագավառներից մեկը սոցիալական ոլորտն է (Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը..., ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելված, կետ 3), որն ընդգրկում է զբաղվածություն, աշխատանքային պայմաններ, եկամուտների բաշխվածություն, սոցիալական պաշտպանություն, աշխատանքի որակ և ստանդարտներ (Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույց, 2021, էջ 93): Սակայն կարևոր ենք համարում գնահատել նաև սոցիալական ներառվածությունը, որը լայն տարածում ունի աշխարհի 18 երկրներում (Մեծ Բրիտանիա, ԵՄ, Էստոնիա, Չեխիա և այլն) (Global Indicators of Regulatory Governance, 2019, էջեր 5, 11):

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք նշել, որ սոցիալական պետության սկզբունքի իրագործումը պետք է ուղղված լինի սոցիալական արդարության և արդար սոցիալական կարգի ապահովմանը: Այդ տեսակետից

կարևոր նշանակություն է ձեռք բերում սոցիալական արդարության սկզբունքի շեշտադրումն իրավաստեղծ գործընթացում: Դրանում արդարության և որակի ապահովման մեթոդներ են հանդիսանում իրավաստեղծ գործընթացի խելամիտ նպատակադրումը, իրավական տեխնոլոգիաների, հատկապես՝ իրավական փորձարարության և կարգավորման ազդեցության գնահատման օգտագործումը: Հարկային օրենսգրքում իրականացված վերջին փոփոխությունների վերլուծության հիման վրա եզրակացություն է արվում առ այն, որ Հայաստանում դեռևս պետք է ձևավորել սոցիալական արդարության պահանջներին համապատասխանող օրենսդրական ակտերի համակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

Դանիելյան, Գ.Բ., Այվազյան, Վ.Ա., Մանասյան Ա.Ա. (2015) *Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)*: Եր.: Հայրապետ հրատ.:

Կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հասարակելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1323-Լ որոշման Հավելված N 1: ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1 Հոդ.915.10 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134855> (մուտք՝12.03.2021)

Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում փոփոխվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաչելու մասին ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելված: Միասնական կայք 2020.12.14–2020.12.27 Պաշտոնական հրապարակման օրը 18.12.2020 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> (մուտք՝12.03.2021)

Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույց: ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 46-Լ որոշման հավելված: Միասնական կայք 2021.01.11–2021.01.24 Պաշտոնական հրապարակման օրը 18.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149219> (մուտք՝12.03.2021)

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ (2014), Երևան, հոկտեմբեր:

Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին: Կ-651-12.06.2020-SՀ-011/0,

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11707&Reading=0> (մուտք՝12.03.2021)

Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

- ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», ...լրացում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման: Երևան, 28 մարտի, 2019: Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10324&Reading=0>
(մուտք՝12.03.2021)
- ՀՀ ԱԺ Աշխարհակազմի անդամազգիտականփորձարկնություն վարչության անդամական փորձարկնություն բաժնի կողմից 17.04.2019թ. արված եզրակացությունը http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=2&ID=10324
(մուտք՝12.03.2021)
- Մալխասյան, Լիանա (2017) Հարուկ իրավական սկզբունքների դերը իրավական համակարգում. Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, № 2, էջեր 204-212:
- Քաղաքական դիսկուրս (8/03/2019) Հարկային համակարգ, արդարություն և անդամական զարգացում. Համաժողովի նյութեր, <http://diskurs.am/2019/03/1084/> (մուտք՝12.03.2021)
- Маликова, А.Х. (2012). *Проблемы формирования социального государства в Таджикистане*. Дисс...д.ю.н. Москва.
- Нечаева, Е.Г. (2007) *Социальное государство: правовое понимание и практика*: Автореф. дис. ... канд. юрид. наук. М.
- Радько, Т.Н. (2009). *Теория государства и права: учеб.* 2 изд. М.
- Сивицкий, В.А., Сорокин, М.Ю. (2016). *Правовой эксперимент и развитие права //* Право. Журнал Высшей школы экономики. № 4, էջեր 15–30:
- Тихомиров, Ю.А. (1996). *Курс сравнительного правоведения*. — М.: Издательство НОРМА.
- Червонюк, В.И. (2009). *Правовые технологии («правовая инженерия»), или прикладная юриспруденция: методологические и дидактико-методические проблемы внедрения в систему вузовской подготовки правоведов //* Юридическая техника. № 3.
- Черногор, Н.Н., Залоило, М.В. (2018) *Актуальные проблемы правотворчества: учебное пособие* /— М.: Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации: ООО «ЮРИДИЧЕСКАЯ ФИРМА КОНТРАКТ».
- Шупицкая, О.Н. (2020) *Реализация конституционных принципов в судебном правоприменении//* Правоприменение. Т. 4, № 1 (56–64). DOI: 10.24147/2542-1514.2020.4(1).56-64
- Giebler, Heiko, Merkel, Wolfgang (2014/01/01). *Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD*. In book: *Theory and Practice of the Welfare State in Europe in 20th Century* (էջեր 79–101). Publisher: HISTORICKY USTAV. Editors: Zlatica Zudova-Leskova, Emil Voracek.
- Global Indicators of Regulatory Governance: Worldwide Practices of Regulatory Impact Assessments* (2019/07/10). World Bank Group.
- Khechen, Mona (2013). *Social justice: concepts, principles, tools and challenges//* Economic and Social Commission for Western Asia (ESCWA), E/ESCWA/SDD/2013/Techni-

cal Paper.9, 16 December 2013, New York.

Rawls, J. (1971). *A Theory of Justice*. Harvard University Press.

Sen, A. (1993). *Capability and Well-Being*. In: Amartya Kumar Sen and Martha Nussbaum (eds.). *The Quality of Life*, Cambridge, MA: Harvard University Press.

References

Daniyelyan, G.B., Ayvazyan, V.A., Manasyan A.A. (2015) *Sahmanadrakan barepvokhumneri hayetsakargi druytnery yev drants iratsman himnakan ughghutyunnery Hayastani Hanrapetutyunum (gitagortsakan hetazotut'yun)* [Provisions of the concept of constitutional reforms of the Republic Armenia and the main directions of their implementation (scientific and empirical research)]. Yer.: Hayrapet hrat. (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman apakentronatsvats hamakargi nerdrman hayetsakargy yev hayetsakargits bkhogh mijotsarrumneri tsragiry hastatelu masin HH karravarutyany 2019 tvakani septemberi 26-i N 1323-L voroshman Havelvats N 1 [The concept of a decentralized regulatory impact assessment system and approving the program of measures arising from the concept. Appendix N 1 to the decision of the Government of the Republic of Armenia 26th of September 2019, N 1323-L]: HHPT 2019.10.09/70(1523).1 Hod.915.10 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134855> (accessed: 12.03.2021) (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman irakanatsman kargy, zhamketnery yev depkery, dra ardyunkum trvogh yezrakatsutyany nerkayatsvogh pahanjnyer sahmanelu yev Hayastani Hanrapetutyany karravarut'yan mi shark voroshumner uzhy kortsrats chanachelu masin HH karavarutyany 2020 tvakani dektemberi 17-i N 2075-N voroshman Havelvats [Annex to the Decision of the Government of the Republic of Armenia on defining the requirements for the implementation of the regulatory impact assessment, the terms, and the cases, the requirements for the conclusion given as a result]. Miasnakan kayk 2020.12.14–2020.12.27 Pashtonakan hrarakman ory 18.12.2020 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> (accessed: 12.03.2021) (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman metodakan ughetsuyts [Methodological guidelines for regulatory impact assessment]. HH karravarutyany 2021 t'vakani hunvari 14-i N 46-L voroshman havelvats. Miasnakan kayk 2021.01.11–2021.01.24 Pashtonakan hrarakman ory 18.01.2021 (accessed: 12.03.2021) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149219> (In Arm.)

Hayastani Hanrapetutyany sahanadrakan barepvokhumneri hayetsakarg [Concept of constitutional reforms of the Republic of Armenia] (2014), Yerevan, hoktember. (In Arm.)

Himnavorum «Hayastani Hanrapetutyany harkayin orensgrum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HH orenki nakhagtsi masin [Rationale on the draft law of the Republic of Armenia “On Making Amendments to the Tax Code of the Republic of Armenia”]. K-651-12.06.2020-TH-011/0 (accessed: 12.03.2021) <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11707&Reading=0> (In Arm.)

Himnavorum «Hayastani Hanrapetutyany harkayin orensgrum popokhutyunner yev

- Iratsumner katarelu yev 2018 tvakani hunisi 21-i «Hayastani Hanrapetut'yan harkayin orengrum popokhutyunner yev Iratsumner katarelu yev 2017 t'vakani dektemberi 21-i «Hayastani Hanrapetutyany harkayin orengrum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HO-266-N orenkum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HO-338-N orenkum popokhut'yun katarelu masin»* [Rationale for making amendments to the Tax Code of the Republic of Armenia, and On Making Amendments to the “Amendments to the Tax Code of the Republic of Armenia” of June 21, 2018, and On Making Amendments to the Law HO-266-N “On Making Amendments and Addenda to the Tax Code of the Republic of Armenia” of December 21, 2017 “On Making Amendments to the Law HO-338-N”], ...Iratsum popokhutyunner katarelu masin» orenkneri nakhagtseri pateti yndunman. Yerevan, 28marti, 2019. K-075-29.03.2019-TH-011/0 (accessed: 12.03.2021)
- <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10324&Reading=0> (In Arm.)
- HH AJ Ashkhatakazmi tntesagitakan pordzaknnt'yan varchutyany tntesakan pordzaknntutyany bazhni koghmits 17.04.2019t. trvats yezrakatsutyuny* [Conclusion by the Economic Expertise Division of the Economic Expertise Department of the RA NA Staff 17.04.2019] (accessed: 12.03.2021) http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=2&ID=10324 (In Arm.)
- Malkhasyan, Liana (2017) *Hatuk iravakan skzbunkneri dery iravakan hamakargum* [The role of special legal principles in the legal system]. Kant'egh. Gitakan hodvatsneri zhoghovatsu, № 2, eger 204–212. (In Arm.)
- Kaghakakan diskurs (8/03/2019) *Harkayin hamakarg, ardarutyun yev tntesakan zargatsum* [Tax system, justice u economic development]. Hamazhoghovi nyuter, <http://diskurs.am/2019/03/1084/>
- Malikova, A.KH. (2012). *Problemy formirovaniya sotsial'nogo gosudarstva v Tadjikistane [Issues of a social state formation in Tajikistan.]*. Diss...d.yu.n. Moskva. (In Rus.)
- Nechayeva, Ye.G. (2007) *Sotsial'noye gosudarstvo: pravovoye ponimaniye i praktika* [Welfare state: legal understanding and practice]: Avtoref. dis. ... kand. yurid. nauk. M. (In Rus.)
- Rad'ko, T.N. (2009). *Teoriya gosudarstva i prava: ucheb.* [Theory of state and law: textbook]. 2 izd. M. (In Rus.)
- Sivitskiy, V.A., Sorokin, M.YU. (2016). *Pravovoy eksperiment i razvitiye prava* [Legal experiment and development of law] // Pravo. Zhurnal Vysshey shkoly ekonomiki. № 4, eger 15–30 (In Rus.)
- Tikhomirov, YU.A. (1996). *Kurs sravnitel'nogo pravovedeniya* [Comparative Law Course.]. — M.: Izdatel'stvo NORMA. (In Rus.)
- Chervonyuk, V.I. (2009). *Pravovyye tekhnologii («pravovaya inzheneriya»), ili prikladnaya yurisprudentsiya: metodologicheskiye i didaktiko-metodicheskiye problemy vnedreniya v sistemu vuzovskoy podgotovki pravovedov* [Legal technologies (“legal engineering”), or applied jurisprudence: methodological and didactic-methodical problems of introducing legal scholars into the system of university training]// Yuridicheskaya tekhnika. № 3. (In Rus.)

- Chernogor, N.N., Zaloilo, M.V. (2018) *Aktual'nyye problemy pravotvorchestva: uchebnoye posobiye* [Actual problems of lawmaking: textbook]/— M.: Institut zakonodatel'stva i sravnitel'nogo pravovedeniya pri Pravitel'stve Rossiyskoy Federatsii: OOO «YURIDICHESKAYA FIRMA KONTRAKT». (In Rus.)
- Shupitskaya, O.N. (2020) *Realizatsiya konstitutsionnykh printsipov v sudebnom pravoprimeneni* [Implementation of constitutional principles in judicial enforcement]// *Pravoprimeneniye*. T. 4, № 1 (56–64). DOI: 10.24147/2542–1514.2020.4(1).56–64 (In Rus.)
- Giebler, Heiko, Merkel, Wolfgang (2014/01/01). *Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD*. In book: *Theory and Practice of the Welfare State in Europe in 20th Century* (էջեր 79–101). Publisher: HISTORICKY USTAV. Editors: Zlatica Zudova-Leskova, Emil Voracek. (In Eng.)
- Global Indicators of Regulatory Governance: Worldwide Practices of Regulatory Impact Assessments* (2019/07/10). World Bank Group. (In Eng.)
- Khechen, Mona (2013). *Social justice: concepts, principles, tools and challenges*// Economic and Social Commission for Western Asia (ESCWA), E/ESCWA/SDD/2013/Technical Paper.9, 16 December 2013, New York.
- Rawls, J. (1971). *A Theory of Justice*. Harvard University Press. (In Eng.)
- Sen, A. (1993). *Capability and Well-Being*. In: Amartya Kumar Sen and Martha Nussbaum (eds.). *The Quality of Life*, Cambridge, MA: Harvard University Press. (In Eng.)

Нуне Джомардян

*Руководитель Центра международных связей и исследований
Международного университета Евразия,
заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры
Эл.адрес: nune.jomardyan@eiu.am*

СОЦИАЛЬНАЯ СПРАВЕДЛИВОСТЬ КАКА КАЧЕСТВЕННЫЙ КРИТЕРИЙ ПРАВОТВОРЧЕСТВА

Основываясь на теориях А.Сена и Дж.Ролза, в данной статье применение принципа социальной справедливости рассматривается с двух точек зрения: «равное распределение первичных благ» и «равные возможности развития способностей». Именно с этой методологической точки зрения и оценивается соотношение социальной справедливости и правотворчества, в ходе которой социальная справедливость рассматривается как одна из основных целей правотворческого процесса. В статье также отмечена важность применения современных юридических технологий. На основе анализа последних изменений в Налоговом кодексе выявлены существующие недостатки и указаны пути их преодоления.

Ключевые слова: социальная справедливость, правотворческий процесс, принцип, цель, правовая технология.

Nune Jomardyan*Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University,**Ph.D. student**Email: nune.jomardyan@eiu.am*

SOCIAL JUSTICE AS A QUALITATIVE INDICATOR OF THE LAW-MAKING PROCESS

Based on the theories of A.Sen and J.Rolls, in this article, the implementation of the principle of social justice was viewed from two perspectives: “equal distribution of primary goods” and “equal opportunity in developing capabilities”. According to the very methodological approach the relevance of social justice and law-making was assessed in which social justice was prioritised as one of the fundamental goals of the law-making process. The research has given much prominence to contemporary legal technologies as well. Based on the analysis of Tax Code recent changes, the existing imperfections were pointed out and the ways of overcoming them were highlighted.

Key words: social justice, law-making process, principle, purpose, legal technology.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. ապրիլի 9-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. մայիսի 7-ին